1967 թ. վերջին լրացավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդես»-ի հրատարակության տասը տարին: Այդ ժամանակաշրջանում լույս են տեսել պարբերականի 39 համարներ, որոնք պարունակում են 500-ից ավելի հեղինակների շուրջ 1300 տարբեր բնույթի նյութեր (հոդվածներ, հաղորդումներ, գրախոսություններ և այլն):

«Հանդես»-ում զետեղված նյութերի մատենագիտական այս ցանկը բաղկացած է երեք բաժիններից: Դրանցից առաջինը պարունակում է 1958—1967 թթ. լույս տեսած բոլոր համարների բովանդակությունը, երկրորդում հրատարակված նյութերը տրվում են ըստ գիտության մասնաճյուղերի, իսկ երրորդը հեղինակների անվանացանկն է:

«Մատենագիտական ցանկը» կազմել են Ա. Մ. Ոսկանյանը, Ա. Ա. Գրիգորյանը և Ս. Ս. Զատիկյանը: